

Սարգիս Գ. Պետրոսյան

Պատմ. գիտ. դոկտոր

## ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

«Հյուսիս-հարավ» հակադրամիասնական  
հասկացությունների լույսի ներքո\*

**Բանալի բառեր** – հակադրամիասնություն, Գամիռա, Գամիրք, Իբերիա, Վիրք, Շուբուր, Շուբրիա, սուրբ, Փուլուադի, Ադիաբենե, հնդեվրոպական:

### Մուտք

Նախնադարյան մարդու միտքն առասպելաբանության ոլորտ մղած հակադրամիասնությունների երկանդամ համակարգին բնորոշ էր գույգ ընկալված իրերի և երևույթների մեջ որևէ հատկանիշի առկայության կամ բացակայության շեշտումը:

Հակադրամիասնական գույգ էին ընկալվում, օրինակ, երկրի լուսավոր-տաք և խավար-ցուրտ գոտիները՝ **հարավն** ու **հյուսիսը**: Հյուսիսային կիսագնդում բնակված մարդիկ, բնականաբար, շատ վաղ էին սկսել ձշտել աշխարհի այդ գոտիների դիրքը իրենց նկատմամբ: Դա անհրաժեշտ էր ինչպես իրենց տեղաշարժերն ուղղորդելու, այնպես էլ մշտական բնակության վայր ու կացարան (նախ և առաջ՝ դեպի հարավ կամ արևելք նայող լեռնալանջ կամ քարանձավ) գտնելու համար: Աշխարհի ընկալումը որպես հարավից ու հյուսիսից բաղկացած ամբողջություն հազարամյակներ շարունակ պահպանվել և իր արտացոլումն է գտել տարբեր ժողովուրդների առասպելաբանական պատկերացումներում<sup>1</sup>: Օրինակ՝ հին եգիպտացիները աշխարհը պատկերացնում էին «հարավի» և «հյուսիսի», «Հորի մասի» և «Մեթի մասի», «երկու երկրների» տեսքով:

**Քանի որ հնդեվրոպացիների գլխավոր պաշտամունքով պայմանավորված՝ կողմնորոշումը դեմքով դեպի արևելք (արևածագի վայր, աղոթարան) էր ուղղված, ուստի հյուսիսը նրանք ընկալում էին որ-**

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.07.2021:

1 Տե՛ս **Иванов В. В., Топоров В. Н.**, Исследования в области славянских древностей, М., 1974, էջ 291, 259-305:

**պես ձախ կողմ, իսկ հարավը՝ աջ:** Բնականաբար, նրանց առասպելաբանական պատկերացումներում հյուսիսին վերաբերող հասկացություններն ընդգրկված էին «ձախի», իսկ հարավին վերաբերող հասկացությունները՝ «աջի» իմաստաբանական հակադրամիասնական շարքերում<sup>2</sup>: Հայկական լեռնաշխարհում դա արտացոլված էր, օրինակ, Եփրատ գետի երկու մեծ վտակների՝ հարավային դիրք ունեցող Արևելյան Եփրատի «լուսավոր» **Արածանի** (սեպագր. Arsaniana) և հյուսիսային դիրք ունեցող Արևմտյան Եփրատի «խավար» **Սև ջուր** (սեպագր. Mela/Mala) անվանումներում<sup>3</sup>:

## 1. Գամիրա և Վիրք երկրանունների մասին

Հայկական լեռնաշխարհին հյուսիսից հարող երկիրը առաջին անգամ հանվանե վկայված է Ասորեստանի Սարգոն II թագավորի (մ.թ.ա. 721-705 թթ.) ժամանակաշրջանի մի արձանագրության մեջ՝ որպես Gamirra երկիր: Արձանագրության հեղինակ Աշուրիսուան՝ Ուրարտուում գործող ասորեստանցի լրտեսների պետը, այդ երկիրը տեղորոշում է Gurania երկրից հյուսիս, իսկ այս վերջինը՝ Ուրարտուի և Gamirra-ի միջև<sup>4</sup>: Gurania-ի (ճիշտ ձևը՝ **Գուռանիա**) այդպիսի տեղադրությունը ճշտվում է իր անվան «լճային (երկիր)» ստուգաբանությամբ, ինչը ենթադրում է, որ այն գտնվել է Զավախքում և Աշոցքի, Վանանդի կից շրջաններում<sup>5</sup>: Ըստ այդմ՝ Գամիրան գտնվել է Վիրքի (այժմ՝ Արևելյան Վրաստան) տարածքում՝ նշված լճային տարածքից հյուսիս: Ենթադրվում է, որ **կիմեր** (Κιμμεριοι) ցեղանունը հին հույներին փոխանցվել էր սեպագրերից հայտնի **gamirra/gimirraï, gimirri** ձևերի միջնորդությամբ: Մեր կարծիքով՝ դրանց բոլորի աղբյուրը եղել է հին հայերի կողմից կիմերներին տրված **գամիր**(ք) անվանումը: Այս վարկածի օգտին են խոսում հետևյալ փաստերը. 1. Հայոց նախնիներն անմիջական շփման մեջ էին իրենցից հյուսիս ընկած Gamirra-ի հետ: 2. Gamirra ցեղանուն-երկրանունը հիշատակած ասորեստանցի լրտեսներն այդ անվանումը լսել էին Ուրարտու-Հայաստանում իրենց տեղեկատու բնակիչներից: 3. Հին հայերը Գամիրք էին կոչում նաև կիմերների նոր հայրենիքը Կապադոկիայի արևելյան մասում, որտեղ նրանք հաստատվել էին՝ սկյուրների

2 Տե՛ս Hocart A. M., Kings and Councillors, Cairo, 1936, էջ 273-276: Դեպի արևածագի վայր, աղոթարան կողմնորոշումը ենթադրվում է դեռևս մեր քարանձավաբանակ նախնիների ժամանակներից, (սե՛ս Ларичев В. Е., Колесо времени, Новосибирск, 1986, էջ 14, 17: Տե՛ս նաև Петросян С., Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1987, N 3, էջ 77-78):

3 Տե՛ս Դեղորոյան Ս., Երկգոյն-երկհարկ տիեզերքի մասին առասպելաբանական պատկերացումը Հայկական լեռնաշխարհում, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1991, N 2, էջ 126-131, **Նույնի** Древнейшие названия Черного моря, озер Умрия и Ван в свете мифологических представлениях древних армян, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1986, N 4, էջ 53-64:

4 Տե՛ս Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), «Вестник древней истории», 1951, N 2-4, надп. № 50, пр. 2:

5 Տե՛ս Դեղորոյան Ս., Դեղորոյան Ծ., Դեղորոյան Լ., «Ջրերի զավակի» պաշտամունքի արտացոլումները սեպագրային մի քանի տեղանուններում, «ՀՀ ՉԻՐԱԿԻ հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ» (այսուհետև՝ ՀՀԿ գիտ. աշխ.), Գյումրի, 1998, N I, էջ 76-83:

ճնշման տակ լքելով իրենց այսրկովկասյան հայրենիքը (մոտ մ.թ.ա. 670–650 թթ. միջակայքում)<sup>6</sup>:

Հին հայերը հյուսիսից՝ Հյուսիսային Կովկասից, Այսրկովկաս ներխուժող ցեղերին տալիս էին **հյուսիսականներ** ընդհանրական անունը («**Հիսիսական** կամ **հիսիսական**» Սեպհական հիսիսոյ. հիսիսային և հիսիսաբնակ») <sup>7</sup>: Մեր կարծիքով՝ կիմերներին հին հայերի տված **գամիր** (հոգն. **գամիրք**) ցեղանունը պայմանավորված է նրանց հյուսիսային ծագմամբ, և դրա հիմքում ընկած է հյուսիսի կողմնորոշիչ Բևեռային աստղի չպահպանված **\*Գամ** («բևեռ») անվանումը: **Գամ** «բևեռ, մելս, սեպ» արմատից ունենք **գամել** «բևեռով պնդել, մելսել» բայը, իսկ **գամ**-ի հոմանիշ **բևեռ**-ը ունի նաև «շրջանակի կենտրոն, երկնքի կենտրոն» իմաստները <sup>8</sup>: **Գամ**-ի և **բևեռ**-ի հոմանիշներ լինելը, երկրորդի «երկնքի կենտրոն» իմաստն ու **Բևեռաստղ** (Բևեռային աստղի հին անվանումը) բարդության գոյությունը մեզ տանում են հայոց հին առասպելաբանության ոլորտ:

**Գամ**//**Բևեռ** կոչվել է նաև տիեզերական այն առանցքը, որի շուրջ պտտվում է երկնականարը, և որի գագաթը համարվել է Փոքր Արջ համաստեղության անշարժ աստղը՝ Բևեռային աստղը: Տարբեր ժողովուրդների առասպելների համաձայն՝ այդ առանցքն այն մելսն էր՝ գամը, բևեռը, որը տիեզերքի արարման ժամանակ խփել էր Արարիչը <sup>9</sup>: Ուրեմն **գամ**-ը **բևեռ**-ի նման գործածվել է նաև «հյուսիս» իմաստով, ինչպես երկնականարի հյուսիսային հատվածը Փոքր ու Մեծ Արջերի անունով կոչվում էր **արջային**: Հյուսիսային այս համաստեղությունները Անանիա Շիրակացին, կոչելով **երկնային արջեր**, համարում է բևեռ երկրի <sup>10</sup>: Ուշագրավ է, որ, միջագետքյան առասպելաբանության համաձայն, Ատրեստանի վերջին մայրաքաղաք **Նինվեն կառուցվել է Մեծ Արջի**, իսկ հին մայրաքաղաք **Աշուրը՝ Բևեռային աստղի երկնային քաղաքներին համապատասխան** <sup>11</sup>: Այսպիսի առասպելների համար հիմք կարող էր հանդիսանալ այդ իրական քաղաքների հիմնադիրների՝ հյուսիսիցի եկվորներ լինելը: Ի դեպ, Միջագետքի հնագույն բնակչության առասպելաբանական պատկերացումներում աշխարհի հյուսիսային ծայրը Հայկական Տավրոսն էր կամ ամբողջ Հայկական լեռնաշխարհը:

Այսպիսով՝ հասկանալի է դառնում, թե ինչու էին հին հայերը կիմերների հյուսիսիցի ցեղը կոչում **\*գամ-իր**-(ք): **Գամ** արմատը դեռևս հավաստի ստու-

6 Ст. Дьяконов И. М., Предыстория армянского народа. История Армянского нагорья 1500 по 500 г. до н. э., Ер., 1968, էջ 169, ր. 251:

7 «Սոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), հատ. II, Եր., 1981, էջ 102:

8 Ст. Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հատ. I, Եր., 1971, էջ 444, 507:

9 Ст. Астральные мифы, «Мифология. Золотой фонд. Энциклопедия», главный редактор Е. М. Мелетинский, М., 2003, էջ 659:

10 Ст. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Եր., 1940, էջ 38-39:

11 Ст. Евсиков В. В., Мифы и мироздании, «Мироздание и человек», М., 1990, էջ 107:

գաբանություն չունի: Այդուհանդերձ, դրանով կազմված **գամ-իր**-(ք) ցեղանվան մեջ հակադրություն ցույց տվող (այս դեպքում՝ «հյուսիս» և «հարավ» հասկացությունների միջև) ծագումով **հ.-ե. -իր < -եր < հ.-ե. -er** վերջածանցի առկայությունը կարող է վկայել նաև արմատի՝ նման ծագում ունենալու մասին:

Կիմերների հիմնական զանգվածի՝ Արևելյան Կապադովկիայում հաստատվելուց հետո ընդունվեց այդ տարածքի **Գամիրք** անվանումը, իսկ նախկին Gamirra-ն նշելու համար ստեղծվեց դրան համարժեք **Վիրք** երկրանունը (ավելի ձիշտ՝ սրա նախօրինակը): Բացառված չէ, որ սա կարող էր նաև նախկինում էլ գործածված լինել, բայց հետզհետե դարձել էր միակ գործածականը: Դա եղել է հին հայերին քաջ հայտնի **Վիրք** և հին հույներին՝ **Ἰβηρο//Իբեր** ձևով ծանոթ ցեղանունների ընդհանուր նախատիպը: Այն ունեցել է **\*seu-er** տեսքը. **հ.-ե. \*seu-er >** հնագույն հայ. **\*իւէր** (> հուն. **\*Ἰβηρο-**) > **\*իվիր > Վիր-ք** (հնչյունական անցման համար հմմտ. **հ.-ե. \*seu-er- եւր > իւր** «յուր, իր»)¹²: «Հյուսիսային», «հյուսիսցի» նշանակող **Վիրք** երկրանունը և **վիրք** ցեղանունը դարձել են համապատասխանաբար **Քարթլի** «Վիրք» և **քարթվել** «վրացի» անվանումների համարժեքը, և դրա **\*վիր** արմատն է այժմ գործածվում **Վրաստան** և **վրացի** բառերում: Մեր մատենագրության մեջ հանդիպող **իվե-րիացի/վերիացի** տարբերակները կրում են հունական միջնորդության կնիքը:

Հ.-ե. **\*seu-er** նախածնում առկա է **հ.-ե. \*seu-** «ձախ» արմատը¹³, որը նաև **հիւսիս//հիւսիւս** բառի առաջին բաղադրիչն է (**հ.-ե. նախածայն \*s-** հայերենում կա՛ն ընկնում է, կա՛ն վերածվում **հ-ի**): Հ.-ե. **\*seu-** արմատի առնչությամբ նշենք, որ Մաքս Ֆասմերի՝ գերմաներենով գրված «Ռուսերենի ստուգաբանական բառարան»-ը ռուսերեն թարգմանած Օ. Տրուբաչովը **север** «հյուսիս» բառի տակ նշում է ինչպես այս բառը **հ.-ե. \*kēu-** նախածակից բխեցնող, այնպես էլ բալթիկ-սլավոնական լեզուների համապատասխան բառերը **հ.-ե. \*seu-** «ձախ» արմատին հանգեցնող տեսակետները¹⁴: Մեր կողմից քննարկվող **\*seu-er-** > **\*իվիր** ցեղանվան **-իր < հ.-ե. \*-er** վերջածանցը նույնական է **գամիր** ցեղանվան **-իր < հ.-ե. \*-er** վերջածանցի հետ, որը կիրառվել է երկու հակադիր հասկացություններ արտահայտելու համար¹⁵: Իսկ այդպիսին էին ըմբռնվելու նախ ձախն ու աջը, ապա՝ նաև հյուսիսն ու հարավը, խավարն ու լուսավորը և այլն: Այս առթիվ Վ. Վ. Իվանովը գրում է. «Թվում է, որ նման հակադրությունների համակարգերում ձախ ձեռք –

12 ՀԱԲ, հատ. II, Եր., 1973, էջ 253-254:

13 **Վիր-ք**/Իբր-իւ երկրանվան **հ.-ե. \*seu-er** նախածակից ծագած լինելու փաստը ևս գալիս է ժխտելու այդ երկրանվան և Հերոդոտոսի Σάσπειρ-εξ ցեղանվան միջև կապ տեսնող արմատացած տեսակետը: Ի դեպ, Իբր-ը, Σάσπειρ-ը և **Սպեր** գավառանունը տարբեր ծագում ունեն, իսկ դրանց նույն ծագումը վերագրող տեսակետը մտացածին է: Դրանց վերաբերյալ տես **Պետրոսյան Ս.**, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 288-295:

14 Տես **Фасмер М.**, Этимологический словарь русского языка, т. III, М., 1971, էջ 588-589:

15 Տես **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. III, Եր., 1957, էջ 110:

աջ ձեռք (կամ նման այլ դրսևորումներ) հակադրությունը կարող է լինել ավելի հին, քան դրա հիման վրա գարգացած ձախ – աջ ունիվերսալ հակադրությունը, որը ներկայացված է շատ մեծ թվով առասպելաբանական համակարգերում»<sup>16</sup>:

Հայկական լեռնաշխարհի բնակչի համար աշխարհի հյուսիսային կողմը, բնականաբար, նաև ցուրտ ու խավար կողմ էր, որի Gammira և Վիրք երկրանունների փոխադարձ կապի մասին են վկայում Վիրքին սահմանակից հայկական Գուգարք նահանգի հետևյալ տեղանունները՝ **Ցուրտաւ** < \*ցուրտ և –աւ տեղանվանակերտ վերջածանց (հմնտ. **Կճաւ, Զիրաւ, Որդնաւ, Պարտաւ**), **Ցուրտագետ** < \*ցուրտ–ա–գետ, **Գոմարեթի** < \*գոմար «կիմեր» ցեղանուն և վրաց. –**եթի** տեղանվանակերտ վերջածանց<sup>17</sup>: Հին դարերում Փոքր Կովկաս լեռնաշղթայի կենտրոնական մասը Հայկական լեռնաշխարհի հյուսիսում գտնվելու պատճառով է **Մթին լեռ** կոչվել: Պատմահոր ավանդած հայոց հնագույն ավանդազրույցներից մեկում ասվում է. «Իսկ Գուշարայ, որ յորդոցն Շարայի, ժառանգեաց զլեռն Մթին, որ է Կանգարք», և որը ներառում էր «զ Կողբ, զԾոբ, զՁոր՝ մինչև ցամուրն Հսակերտ»<sup>18</sup>: Ս. Երեմյանի կարծիքով՝ **Մթին լեռան** լեռնանունով է պայմանավորված մինչև մեր օրերը պահպանված **Մթնածոր** և **Խավարածոր** տեղանունների գոյությունը<sup>19</sup>:

Այս տեսանկյունից հմնտ. Հոմերոսի «Ոդիսականի» հետևյալ հատվածը, որում կիմերների երկիրը «հավերժ խավար» է համարվում. «Երբ արեգակը մայր մտավ, և մեր ձամփան մուրը պատեց, / Մեր նավն արդեն խորամթին օվկիանոսի ափն էր հասել./ Կիմերացոց հայրենիքը և քաղաքն է այստեղ ընկած, / Որ միգամած է հավիտյան ու ծածկված խիտ անպերով. / Նրանց երբեք չեն տաքացնում ձառագայթներն արեգակի, / Ո՛չ աստղալից երկնքից, երբ բարձրանում է առավոտյան, / Ո՛չ էլ այնժամ, երբ երկնքի բարձունքներից իջնում է ցած, / Եվ այդ դժբախտ մարդկանց վրա տարածված է խավարն հավերժ»<sup>20</sup>:

Պատահական չէ, որ անգամ IV դարում Պարխար (Արևելապոնտական) լեռնաշղթայից և Հայաստանից հյուսիս ընկած Պոնտոսի մի հատվածի մասին պատկերացում է եղել, թե այն խավար երկիր էր՝ իր բոլոր բացասական հատկանիշներով: Վաղքրիստոնեական հայտնի քարոզիչ Կվինտոս Տերտուլիանոսը «Ընդդեմ Մարկիոնի» (գլ. I) աշխատության մեջ քրիստոնեական աստվածաբան Մարկիոնի հայրենիք Պոնտոսը նկարագրում է որպես վայրենի և սանձարձակ մարդուկների ապաստան, որի բնակիչները սնվում էին մե-

16 **Иванов В. В.**, Об одном типе архаичных знаков искусства и пиктографии, «Ранние формы искусства», Сборник статей, М., 1972, с. 114.

17 Տե՛ս **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 87, **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., Եր., 1972, էջ 311:

18 **Մովսիսի Խորենացու** պատմություն Հայոց (այսուհետև՝ Խորենացի), Եր., 1981, գիրք Բ, գլ. Ը:

19 Տե՛ս **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 58:

20 **Հոմերոս**, Ոդիսական, Հունարեն բնագրից թարգմանեց Սիմոն Գրքաշարյան, Եր., 1957, էջ 145:

նելոտիով, զբաղվում արյունապղծությամբ, իսկ երկիրն այնպիսին էր, որ այնտեղ «արևը երբեք չէր լուսավորում, և ցերեկները միշտ սև էին»<sup>21</sup>:

## 2. Արմատակից ŠUBUR և Šubria երկրանունների մասին

Եթե Հայկական լեռնաշխարհի հյուսիսն ու հյուսիսային հարևանները բնորոշվել են «մթին» բառով և «պիղծ» մարդկանց բնակության վայրեր են համարվել, ապա, առասպելաբանական պատկերացմամբ, նրա հարավն ու հարավային հարևան երկիրը պետք է ստանային «պայծառ», «լուսավոր» նշանակող անուններ և համարվեին «սուրբ» մարդկանցով բնակեցված սրբազան վայրեր: Վերջինի առնչությամբ նկատենք, որ ասորեստանյան արձանագրություններով մեզ է հասել Հայկական լեռնաշխարհի հարավում գտնված երկրի՝ այդպիսի բովանդակություն ունեցող Šubria/Šubrê անվանումը<sup>22</sup>: Իսկ «պայծառ», «լուսավոր», նաև «այրող» իմաստների կրող էր լինելու Հյուսիսային Միջագետքի՝ Հայկական լեռնաշխարհի հարավային հարևանի ŠUBUR անվանումը<sup>23</sup>: Ի. Մ. Դյակոնովի կարծիքով՝ Հյուսիսային Միջագետքի աքքադական Šubartu/Šubir անվանումները վերջինի հետ միասին կապված են Հայկական լեռնաշխարհի հիշյալ երկրի անվան հետ և ծագում են տեղի հին բնակիչներ սուբարեացիների (ըստ նրա՝ նույն խոսիների) անունից<sup>24</sup>: Նա նշում է նաև, որ հիշյալ աքքադական ձևերը մ.թ.ա. VII-VI դարերում կիրառվում էին բացառապես Հյուսիսային Միջագետքի՝ Ասորեստանի համար<sup>25</sup>, երբ Šubria/Šubrê անվանումը տրվում էր Սասնա լեռներում և դրանց շրջակայքում տեղակայված երկրին<sup>26</sup>:

Շուրրիան առանձին ուսումնասիրության առարկա դարձրած Դ. Սարգսյանը գրում է, որ թեպետև այս երկրանունը «ձևափոխությունն է շումերական դարաշրջանի ŠUBUR<sup>ki</sup>, աքքադական դարաշրջանի Subartu<sup>ki</sup> (գաղափարագիր SU.BIR<sup>ki</sup>) և միջինասորեստանյան դարաշրջանի<sup>ma1</sup> Šubarī երկրանուններից, բայց ունի իր տարածքով դրանցից տարբերվող աշխարհագրա-

21 Дониин А., У истоков христианства (От зарождения до Юстиниана), М., 1989, с. 144. Ինչպես մեր Պատմահայրն է վկայում, Մթին լեռը ժամանակին նաև **Կանգաթը** է կոչվել: Այս ցեղանուն-տեղանունը կարելի է տրոհել **\*Կանգ-ար-թ** բաղադրիչների, որոնցից **\*Կանգ-**ը բառի արմատն է, իսկ **-ար-թ** կան ցեղանվանակերտ վերջածանց է, կամ վերջնածայն **-թ**-ի հետ միասին ներկայացնում է **այր** (հոգն. **արթ**) բառը: Ցեղանուն-տեղանվան **Կանգ** բաղադրիչը նաև հայ. **կանգուն** բառի արմատն է, որը նշանակում էր «Ընդհանրապես երկայնության չափ արմունկից մինչև բացված ձեռքի միջնամատի ծայրը, կամ անրակից մինչև արմունկը (**Մայիսայանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հատ. II, Եր., 1944, էջ 382): **Կանգուն < Կանգ-ուն**. հմտ. **դեղծ-ուն, խոս-ուն, ծոր-ուն, փայլ-ուն** և այլն: Ամենայն հավանականությամբ, **Կանգաթը** ցեղանուն-տեղանունը ևս «հյուսիս»-ի վերաբերյալ մեր նախնիների ունեցած բացասական պատկերացման արգասիքն է և սերտ կապի մեջ է դիտվել հյուսիսի այդ լեռների **մթին** բնորոշման հետ: Այդ անարև աշխարհի բնակիչները ևս առասպելաբանության մեջ կարող էին Պոնտոսի բնակիչների նման ըմբռնվել որպես մարդուկներ՝ թզուկներ, ինչի համար էլ կոչվել են **\*Կանգաթը**, այսինքն «կանգունաչափ մարդիկ»: Հետագայում այս ընդհանրական անվանումը տրվել է Գուգաթը նահանգի արևելյան զավառներից մեկին (տես **Երեմյան Ա.**, նշվ. աշխ., էջ 57):

22 Տես **Петросян С.**, Древнейшие названия Черного моря, озер Умрия и Ван в свете мифологических представлениях древних армян, էջ 60-62:

23 Տես **АВИИУ**, N 67, 68a, 73:

24 Տես **Дьяконов И. М.**, Предыстория..., էջ 17, ր. 16:

25 Տես նույն տեղում, էջ 14, ր. 11:

26 Տես նույն տեղում, էջ 138-139:

կան այլ բովանդակություն»<sup>27</sup>: Ճիշտ է, որ բերված մյուս երկրանունների համեմատ *Šubria/Šubrê* երկրանունն ունեցել է աշխարհագրական այլ բովանդակություն, բայց ճիշտ չէ, որ այն դրանց ձևափոխությունն է: Այս երկրանունները պարզապես արմատակիցներ են: Դրանք ունեցել են ոչ միայն աշխարհագրական, այլև պատմական և իմաստային տարբեր բովանդակություն: Դրանք տարբեր են նաև իրենց ստուգաբանությամբ:

Շումերական արձանագրություններից հայտնի երկրանվան *ŠUBUR* ձևի *šub-//sub-* արմատը հայերեն **սով** արմատի միջոցով (սեպ. *b//p, v*) գալիս է հ.-ե. \**keu-* «փայլել, լուսավորել», «այրել» արմատի միջին \**kou-* ձայնդարձից, որի \**ku-* «այրել, խանձել»<sup>28</sup> տարբերակից էլ ունենք \**uni-* արմատը, որն առկա է հայ. *ունաղ* «քաղցից նվաղել» բառում<sup>29</sup>:

**Սով** բառը համարվում է իրանական փոխառություն (հմմտ. պահլ. *sōi* «քաղց», մանիք. պահլ. *sōig* «քաղցած»)՝<sup>30</sup> բայց դրանք լինելու են զուգահեռներ՝ ծագած հնդեվրոպական միևնույն արմատից: **Սուաղ** < **սու-աղ** բառի -**աղ** վերջածանցի համար հմմտ. **թակաղ, կենցաղ, խանդաղատ, կախաղան** բառերի համապատասխան վերջածանցները՝ ծագած հ.-ե. \**-elo-/\*-ilo-/\*-olo-* նախածնից<sup>31</sup>: Թեպետև **սուաղ** բառից առաջացած **սուաղիլ** բայը դեռ հավաստի ստուգաբանություն չունի<sup>32</sup>, բայց դեռևս ՆՀԲ-ի հեղինակներն էին նկատել դրա կապը **սով** բառի հետ<sup>33</sup>: Ի դեպ, «քաղցածություն» հասկացությունը բխում է «(ստամոքսում) այրուցք» հասկացությունից:

Որ *ŠUBUR*-ն իր ածանցյալներով և *Šubria/Šubrê*-ն, արմատակիցներ լինելով հանդերձ, իմաստային տարբեր ընդգրկում են ունեցել, դրսևորվում է հետևյալում. նույն արմատը կիրառվել է իմաստային տարբեր նրբերանգներով՝ «փայլել, լուսավորել» և «այրել, խանձել» (վերջինը՝ կլիմայի վերաբերյալ): Այսպես՝ կատարվել է վերջածանցի ընտրություն. Հյուսիսային Միջագետքին վերաբերելու դեպքում *-ur/-ir/-ar* վերջածանցն է, իսկ Հայկական լեռնաշխարհին վերաբերելու դեպքում՝ *-ro*-ն: *Šubria/Šubr-ia* երկրանվան \**subr* հիմքը ծագում է հ.-ե. \**ku-bh-ro* նախածնից, որից է հայերեն **սուրբ** < \***սուրբ** բառը (**-րբ** < **-բր** դրափոխությամբ)<sup>34</sup>: Ցեղակից լեզուների արմատակից բառերից հայերեն համապատասխան բառին իմաստով առավել մոտ են հին հնդկ. *śubhrá-* «փայլուն, պայծառ, մաքուր, գեղեցիկ, լուսավոր» և իռլ. *cuanna* «գեղե-

27 Саркисян Д., Страна Шубриа в урартских надписях, «Древний Восток», 2, Ер., 1976, с. 121.

28 Стен Джакян Г., Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ер., 1967, էջ 80, 112, 143, 144:

29 Стен ՀԱԲ, հատ. IV, Եր., 1979, էջ 244:

30 Ջահուկյան Չ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՄԺ), Եր., 1987, էջ 233:

31 Стен ՀԱԲ, հատ. II, էջ 141, 329, ՀԼՊՄԺ, էջ 233:

32 Стен ՀԱԲ, հատ. IV, էջ 247-248:

33 Стен ՆՀԲ, հատ. II, էջ 729:

34 Стен ՀԱԲ, հատ. IV, էջ 255-256:

ցիկ, սիրուն, նուրբ»<sup>35</sup> բառերը: Շուբրիայի՝ սուրբ երկիր ըմբռնվելու մասին է խոսում նաև դրա երկրորդ անվանումը՝ Arme-ն<sup>36</sup>: Դրա Arm- հիմքը նույնական է **Արմալիր** (սուրբ քաղաք)<sup>37</sup> և **արմալ** (սուրբ թռչուն) բառերի արմատների հետ: Արմալիրը Հին Հայաստանի մայրաքաղաքն էր և քրմապետի նստավայրը, իսկ **արմալ**-ը մեռնող-հառնող փյունիկ թռչունի բուն անունն էր՝ ծագած \*արմ-հալ նախաձևից: Դրանց արմատակիցներից են հունական Ատտիկայի Ἄρμα տեղանունը (այս վայրում էին գուշակներն սպասում մարգարեական նախանշանների հայտնությանը)<sup>38</sup> և հուն. ἄρμη «սպիտակություն», ἀργός «սպիտակ, պայծառ, փայլուն» բառերը<sup>39</sup>, իսկ հնդեվրոպական մակարդակով՝ հայ. **արծաթ**, հին հնդկ. arjuna «լույս, սպիտակ», լատին. argentum «արծաթ» և մի շարք այլ բառեր<sup>40</sup>: Ինչ վերաբերում է **Արմալիր** տեղանվան -**վիր** բաղադրիչին, ապա այն կարող է ծագած լինել հ.-ե. \*uer- «ցանկապատել» արմատից, որն առկա է նաև **վրան** (< \*վիր-ան) «պինդ ու հաստ կտորից կառուցվածք՝ կոնաձև կամ չորեքկուսի, որ կանգնեցնում են բաց տեղում գետնի վրա՝ մեջը պատսպարվելու համար, ցրտից, արևից, անձրևից կամ ապրելու համար» բառում (ի դեպ, փոխաբերաբար **վրան**-ը նաև «երկինք» է նշանակում)<sup>41</sup>:

### 3. Pulvadi երկրի, նրա բնակիչների և երկրանվան մասին

Ը.-ե. \*keu- «փայլել, լուսավորել» արմատի բուն իմաստն առկա է Հայկական լեռնաշխարհի հարավային եզրագոտու հարավարևելյան հատվածը կազմած լեռնաշղթայի **Սավալան** (այժմ՝ **Սարալան**, համանուն գագաթով՝ 4821 մ)<sup>42</sup> անվան մեջ: Արաբ աշխարհագետների հետևորդ, XIV-XV դդ. սահմանագլխի մատենագիր Աբդ աբ-Ռաշիդ ալ-Բաքուվին («Բաքվեցի») Սավալանը համարում էր **Արմինիյա**-ի (Հայաստան) և **Ադարբայջան**-ի (Ատրպատական) սահմանագոտին: Նա գրել է. «[Հաղորդում են բառերով] մարգարեի, Ալլահը թող բարեմաղթի նրան ու ողջունի նրան, որ Արմինիյայի և Ադարբայջանի միջև կա մի լեռ՝ կոչված Սավալան: Նրա վրա են

35 «Wörterbuch Sanskrit-Deutsch» von Prof. Dr. Dr. Habil Klaus Mylius. VEB Verlag Enzyklopädie, Leipzig, 1980, էջ 786, ՀԱԲ, հատ. IV, էջ 256:

36 Տե՛ս **Меликшвили Г.**, Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), М., 1960, надп. № 156 Д I-II:

37 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Արամնյակի որդիները և նրանց տիրույթները եռադատության տեսանկյունից, «ՀՀԿ գիտ. աշխ.», XIII, Եր., 2010, էջ 24-32, **Նույնի՝** Երեք դասերը և եռյակ բնակավայրերը հին Հայաստանում, ՀՀ քաղաքաշինության նախարարության հայ ճարտարապետության ազգային թանգարանի «Տարեգիրք 1994», Եր., 1995, էջ 14-17:

38 Տե՛ս «Древнегреческо-русский словарь», Составил И. Х. Дворецкий, т. I, М., 1958, էջ 236:

39 Տե՛ս **Иванов В. В., Гамкрелидзе Т. В.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. I, Тб., 1984, էջ 229:

40 Տե՛ս ՀԱԲ, հատ. I, էջ 317-318: Ղեռևս հնդեվրոպական միասնության ժամանակաշրջանում սպիտակ գույնը համարվում էր մաքրության ու սրբության խորհրդանիշ և քրմական դասը բնորոշող գույն (տե՛ս **Иванов В. В., Гамкрелидзе Т. В.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб., 1984, էջ 788, ր. 5):

41 Տե՛ս ՀԱԲ, հատ. IV, Եր., 1945, էջ 357:

42 Տե՛ս **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 79: **Սավալան > Սարալան** հնչյունական անցումը կարող էր տեղի ունեցած լինել պարսկերենում միջին պարսկերենից (պահլավերեն) նոր պարսկերենին անցնելու ժամանակաշրջանում. հմտ. միջ. պարս. vāt «քամի», vārān «անձրև», Тахрѣз և նոր պարս. bād, bārān, Tabriz:



գտնվում դրախտային աղբյուրներից մեկը [և] մարգարեններից մեկի գերեզմանը, և դրա շուրջը՝ տաք աղբյուրներ, ուր գալիս են հիվանդները: Ձյունը չի վերանում նրա գագաթից ո՛չ ամռանը, ո՛չ ձմռանը»<sup>43</sup>: Անտարակույս, միայն իր բարձրության համար չէ, որ Սավականը սրբազան լեռ է համարվել: Իր դերն է ունեցել նաև Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվելու հանգամանքը: Դրա մասին է խոսում նրա **Սավական** անվանումը:

**Սավալ-ան** լեռնանվան հիմքում հ.-ե. \*sāw-el- նախաձևն է, որից են ծագել նաև հուն. ἄελιος «արև, արևի լույսը», լատին. sol «արև», հին հնդկ. svar- «արև, լույս», ավ. hvare «արև, արևի լույսը», ռուս. солнце «արև» և ցեղակից լեզուների մի շարք բառեր<sup>44</sup>: **Սավալ-ան** լեռնանվան **-ան** վերջածանցը եթե թրակա-պելասգյան **-an/-en** ածականակերտ վերջածանցը չէ<sup>45</sup>, ապա կարող է լինել հնդեվրոպական նախալեզվից եկած տեղանվանակերտ վերջածանց: Այն իր զուգահեռն ունի հայերենում (հմմտ. հայկական **Ալեան, Թորդան, Կապան, Շաարջան, Սեան** և այլ տեղանունների համապատասխան վերջածանցները): Թրակա-պելասգյան լեզուներից մնացած տեղանուն կարելի է համարել Բայլական-Արդարիլ ճանապարհին գտնվող և Կուր-Արաքսյան հարթավայրն ու Փայտակարանը Ատրպատականին կապող Սավավաթի լեռնանցքի անվանումը: Լեռնանցքի հին **Կասպիական** անվանումը<sup>46</sup>, ըստ երևույթին, գրական ծագում ունի (տեղական անվանումը չէ), մանավանդ որ այդպես էին կոչվում նաև Դարիալի, Դերբենդի և Ռեյի լեռնանցքները:

Այս լեռնանցքի և դրան կից բնակավայրի **Սավավաթ** անվան հիմքում թերևս պելասգերեն σαλαβη «անցք, բացվածք» բառի թրակերեն արմատակիցն է (ցեղակից այս լեզուների մերձավորությունը հասնում է բարբառներ լինելու աստիճանի), որը պելասգերենից հունարենին անցած σέλας «փայլ» և σελένη «լուսին» բառերի հետ միասին բխեցվում է հ.-ե.\*suel-

43 Абд ар-Рашид ал-Бакъви, Издание текста, перевод, предисловие, примечания и приложения 3. М. Бунятова, М., 1971, с. 61. Սավական լեռան՝ շատ ավելի վաղ Հայաստանի հարավարևելյան սահմանագրվելը լինելու մասին է վկայում Դարեհ I Աքեմենյանի՝ Բեհիստունի ժայռի եռալեզու արձանագրությունը: Այնտեղ կարդում ենք. «Ասում է Դարեհ թագավորը: Երրորդ անգամ հայ ապստամբները հավաքվեցին [և] գնացին Դադարշիշի դեմ կռիվ անելու: Ուլամա անունով անրոց [կա] Հայաստանում. այնտեղ կռիվ արեցի: Ահուրամագրան ինձ օգնություն բերեց: Ահուրամագրայի շնորհիվ բանակը, որ իմն էր, այն բանակից, որ ապստամբ էր՝ շատ [մարդ] սպանեց: Թախարշի ամսի 9-րդ օրն էր այն ժամանակ, երբ կռիվ արեցին: Հետո Դադարշիշը ինձ սպասեց Հայաստանում, մինչ ես հասա Մարաստան» ((28, II, 42-49) (**Պետրոսյան Ս.**, Դադարշիշի գորաբանակի նահանջի երթուղին, «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), Եր., 1982, N 3, էջ 155): Հայ ապստամբների և Դադարշիշի պարսկական զորաբանակի երրորդ արձակատուները տեղի է ունեցել հայ-մարական սահմանագլխին գտնվող Uyama անրոցի մոտ: Ներկայումս այդ անունն է կրում Սավական լեռան լանջին՝ Թավրիզի մոտ գտնվող Յամի լեռնանցքը (տե՛ս նույն տեղում, էջ 155-157):

44 Տե՛ս Փաբեր Մ., նշվ. աշխ., էջ 710-711: Հայերենում այս բառը հանդես է գալիս որպես **շառափղ** (< \*շառ-ավիղ) բառի և առասպելաբանական թրի **Հալունի** (< \*հավիլ-ունի) անվան բաղադրի:

45 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Թրակա-կիմերական էթնիկական տարրը Արաքսի ստորին հոսանքի շրջանում, ՊԲՀ, Եր., 1979, N 1, էջ 189-203:

46 Տե՛ս **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 58:

/ \*sel- «վառվել»<sup>47</sup> (ուրեմն նան «լույս տալ») արմատից: Պելասգերենում  $\sigma\alpha\lambda\alpha\beta\eta$ -ն հավանաբար հնչել է \*salaxā (որովհետև հունարենը վ հնչյուն չուներ, և նրա p-ն հաճախ արտացոլում էր փոխատու լեզվի վ-ն): Եթե այս բառն իսկապես կար նաև թրակերենում, ապա լեռնանցքամերձ բնակավայրի անվան մեջ դրան հավելվել է -at տեղանվանակերտ վերջածանցը (հմմտ. -ատ վերջածանցով կազմված **Այրարատ, Լմբատ, Շաղատ, Որթուատ, Տամբատ** և հայկական այլ տեղանուններ):

Սալավաթի լեռնանցքը գտնվում է նախկին Մեծ Հայքի Փայտակարան նահանգի և Ատրպատականի Կատիշք ազգագավառի միջև: Վերջինն ուրարտական արձանագրություններում հիշատակված Փուլուադի (Puluadi) երկիրն է<sup>48</sup>: Դրա և Մեծ Հայքի Պարսպատունիք գավառի միջև էր գտնվում մեկ ուրիշ կարևոր լեռնանցք՝ կոչված **Դրունք Հայոց** կամ **Արմինիյան անցք** (հուն. Ἀρμενίων πύλων)<sup>49</sup>: Փուլուադի երկիրը, հավանաբար, ուրարտական թագավորների ուշադրության առանցքում էր հայտնվել իր ընդարձակ տարածքի և լեռնանցքամերձ ռազմավարական կարևոր դիրքի պատճառով: Դրա նվաճման մասին պատմում է Սարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735 թթ.)՝ Վարզականի (Varzaqan) ժայռափոր արձանագրությունը, որում ասվում է. «Խալդեն արշավեց, սեփական զենքին (?) ենթարկեց Քաղիաու (?) արքային (և) Պուլուադեխե լեռնային երկիրը... Սարդուրեն ասում է. - Գրավեցի քսանմեկ ամրոց, քառասունհինգ քաղաք մեկ օրում նվաճեցի: Լիրլիունե քաղաքն արքայական, (որ) ամրացված (էր) կռվում գրավեցի»<sup>50</sup>:

Փուլուադիի դեմ տարած հաղթանակը դժվարությամբ էր տրվել Սարդուրի II-ին: Ավելի քան յոթ դար անց Ստրաբոնը նախկին Փուլուադիի և դրա շրջակայքի բնակչության վերաբերյալ գրում է հետևյալը. «Լեռների երկարությամբ (Կասպից - Ս. Պ.)՝ ծովից սկսած մինչև բարձունքը, բնակվում են քիչ քանակությամբ աղվաններ և հայեր. և ավելի շատ գեղեր, կադուսիներ (ինձ՝ կատիշներ - Ս. Պ.), ամարդներ, կիրտիներ, անարիակներ և ուրիշ զանազան ցեղեր, որոնք ավելի ավազակ և պատերազմիկ են, քան երկրագործ.- հողերի կոշտությունն է արել այսպես: Սակայն այս լեռնոտ ծովափի մեծագույն մասը բռնել են կադուսիները՝ համարյա 5000 ստադիոն, ինչպես ասում է Պատրոկլեսը»<sup>51</sup>: 5000 ստադիոնը մոտավորապես 890 կմ է, հսկայական տարածք ավազակաբարո և պատերազմիկ ցե-

47 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 91, 96-97: **Սալավաթ** կոչվող բնակավայր կա նաև Սև ծովի հարավային ափին գտնվող Սինոպի շրջանում: Սա հավանաբար գալիս է ժամանակին այնտեղ բնակված թրակախոս կիմերների լեզվից և եղել է տեղական **գետանցի** անվանումը:  
 48 Տե՛ս YKH, NN155 E և 417: Տե՛ս նաև **Երեմյան Ա.**, Ուրարտու պետությունը և հարևան երկրները մ.թ.ա. VIII-VII դդ. (քարտեզ), «ՀՍՍՌ առլաս», Եր.-Ս., 1961, էջ 102, **նույնի՝** Ուրարտու պետությունը (մ.թ.ա. 870-590 թթ.) (քարտեզ), «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, Եր., ՀՍՍՀ ՉԱ հրատ., 1971:  
 49 Տե՛ս **Երեմյան Ա.**, նշվ. աշխ., էջ 50, 80:  
 50 YKH, N 417 և «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հատ. I, Եր., 1981, էջ 70: Թարգմանությունը և տառադարձությունը ուրարտագետ **Հ. Կարազոյազյանին** են:  
 51 **Ստրաբոն**, Քաղեց և թարգմանեց **Հ. Աճառյան**, Եր., 1940, էջ 34-35 (Strabo, XI, 7, 1):

ղերի համար, ինչպիսիք էին Փուլուադիի բնակիչների սերունդ կատիշ-կա-  
դուսինները և դրանց հարևան-դաշնակիցները: Ըստ այսմ պատահական չէ,  
որ նրանց նախնիները կիմերների հետ հանդես էին եկել Ուրարտուի դեմ:  
Ուրարտուում գործող ասորեստանցի լրտեսների՝ Ասորեստանի թագավոր  
Սարգոն II-ին ուղարկած զեկուցագրերի համաձայն. «Ուրարտական թա-  
գավորը հենց որ գնաց Գամիր երկրի դեմ, նրա զորքը ամբողջությամբ  
ջախջախվեց: Նա՝ ինքը, և նրա մարզերի կառավարիչները իրենց զորքով  
պահ են մտել»<sup>52</sup>, «Կիմերացին այս, դուրս եկավ Մանա երկրից և Ուրարտու  
մուտք գործեց»<sup>53</sup>, «...պուլիացիների և սուրիացիների առթիվ ամբողջ Ու-  
րարտու երկիրը սարսափում է»<sup>54</sup>: Ռուսա I-ի (մ.թ.ա. 735-713 թթ.) թշնամի  
կիմերների դաշնակիցը դարձած պուլիացի/փուլիացիները, անտարակույս,  
Puluađi երկրի բնակիչներն էին: Դա ցույց է տալիս նախ՝ նրանց անվան և  
Puluađi երկրանվան առաջին բաղադրիչների նույնությունը, ապա՝ արձա-  
նագրությունից մեջբերման երկրորդ հատվածում նշված ռազմական գոր-  
ծողությունների Ուրարտու-Մանա սահմանամերձ շրջանը, որտեղ և  
գտնվում էր Ուրարտուի և Մանայի հարևան Փուլուադի երկիրը:

Ըստ երևույթին, Փուլուադիի բնակչության ապստամբությունը ձնշվել է  
Ռուսա I-ի հաջորդ Արգիշտի II-ի (մ.թ.ա. 713-685 թթ.) կողմից, որից հետո  
վերջինս տարածքներ է նվաճել Փուլուադիի արևելյան հարևան մի շարք  
երկրներում: Չի բացառվում, որ այդ երկրների բնակիչները այն սուրիացի-  
ներն էին, որոնք պուլիացիների (փուլիացիների) հետ միասին «սարսափի»  
մեջ էին պահում Ուրարտուի սահմանամերձ մարզերի բնակչությանը:  
Դրանք, անշուշտ, կադուսիների գլխավորած ցեղամիության մեջ մտած և  
Կասպից ծովից հարավ-արևմուտք բնակված այն լեռնցի ցեղերն էին, ո-  
րոնց սերունդները Սորաբոնի ժամանակ կոչվում էին **գեղեր/գեղեր, ա-  
մարդներ, կյուրտիներ, անարիակներ** և «ուրիշ զանազան ցեղեր, որոնք  
ավելի ավազակ և պատերազմիկ են, քան երկրագործ»<sup>55</sup>: Արգիշտի II-ը  
նվաճել և հարկատու էր դարձրել այդ երկրները: Նա Փուլուադի երկրում  
իր անունով ամրոց է կառուցել և ներկայիս Սարաբի մոտ (Արդաբիլից  
արևմուտք) երկու արձանագրություն թողել, որոնցում պատմում է այդ  
կողմերում իր կատարած նվաճումների մասին<sup>56</sup>:

52 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 322:

53 Նույն տեղում:

54 Նույն տեղում:

55 Տե՛ս **Ստրաբոն**, էջ 34-35, 49 (Strabo, XI, 7, 1; XI, 13, 3; XI, 13, 4): Քսենոփոնը «Կյուրուպեդիայում» կադուսիներին հիշատակում է Կյուրոս Մեծի (մ.թ.ա. 559-530 թթ.) բանակում Բաբելոնի դեմ կռվողների թվում: Արտաքերքեսե II-ի (մ.թ.ա. 401-339 թթ.) օրոք նրանք ապստամբել էին և պարտության մատնել իրենց դեմ ելած արքայի բա-  
նակին: Ապստամբությունը հաջողվել էր ճնշել միայն Արտաքերքեսե III-ին (մ.թ.ա. 359-338 թթ.): Սա էլ պատե-  
րազմում ցուցաբերած քաջության և կադուսիների առաջնորդին մենամարտում հաղթելու համար իբրև թե Արշամ  
Կորոմանին նշանակել էր Հայաստանի սատրապ (այս մասին տե՛ս **Դանդաև** **Մ. Ա.**, Политическая история  
Ахеменидской державы, М., 1985, էջ 66, 240, 249): Կատիշները հիշատակվում են նաև 451 թ. Ավարայրի ճակա-  
տամարտում այլ ցեղերի հետ միավին պարսից բանակի աջ թևում հայերի դեմ կռվողների թվում:

56 Տե՛ս **Артюнян Н. В.**, Бивайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, Ер., 1970, էջ 319-321:

Փուլուադի երկրի լեռնանցքամերձ դիրքը նկատի առնելով և հիմք ընդունելով նրան հյուսիսից հարևան Մեծ Հայքի Պարսպատունիք գավառի՝ հազարամյակներ շարունակ իր Ղարադադի բարբառով հանդերձ հայաբնակ լինելու իրողությունը՝ կարելի է Pulu-adi և puli-**ացի** պուլիացի//փուլիացի բառերի առաջին բաղադրիչներում տեսնել հայերեն **փող** (սեռ. հոլով՝ **փողոյ**) բառի սեպագրային գրանցումները: **Փող** բառը բազմիմաստ է, նշանակում է նաև «նեղ անցք, նրբանցք կամ միջանցք, որ շինության մեջ անցնում է ծայրեծայր...», «նեղ անցք՝ ճանապարհ այգու տախտակների միջով»<sup>57</sup>: Այս արմատից են կազմված «փողոց» նշանակող **փողան** և **փողոց** բառերը. հմմտ. **փողոց տալ**, **փողոց կտրել** «անցք՝ ճանապարհ բանալ»<sup>58</sup>: Հայ. **փող** արմատը Գ. Ջահուկյանը համեմատում է հունարեն πύλη (հին արտասանությամբ՝ **պուլէ**) «դուռ, դարպաս, մուտք, անցք» և պելասգ. φύλαξ/φύλακος (հին արտասանությամբ՝ **փուլաքս/փուլակոս**) «պահապան, դժնապան» բառերի հետ<sup>59</sup> (**դուռն** (հոգն. **դրունք**) կոչվում էին նաև լեռնանցքները): Այսպիսի ստուգաբանության օգտին է կարծես վկայում Հայկական Տավրոսի արևելյան հատվածում գտնված Pulijani լեռնանցքամերձ բնակավայրի անվանումը<sup>60</sup>:

Puluadi երկրի արևելյան հարևան Թալիշ-Գիլանի լեռնաշղթայի անձավաշատ լինելու իրողությունն է հավանաբար պայմանավորել փուլիացիների հետ հիշատակված նրանց դաշնակից suri-ացիների ցեղանվան գոյությունը: Վերջինը կարելի է հասկանալ «անձավաբնակներ, քարանձավների բնակիչներ» իմաստով, որի դեպքում դրա \*sur- արմատը կարելի է նույնացնել հայերեն **սոր** «ծակ, խոռոչ, ծերպ» և «ծակի մեջ շինված թռչնի բույն, գազանի որջ, սողունի ծակ» բառի հետ: Հնդեվրոպական ծագման հայերեն բառին իմաստով մոտ են հունարեն κύαρος «խոռոչ», պարսկերեն sūrāx «ծակ», լատիներեն caverna «խոռոչ, որջ, ծառի ճեղք» բառերը<sup>61</sup>: Puliaci և suri-ացի ցեղանունների մեջ \*pul- և \*sur- արմատներին հավելված -i-երը հ.-ե. -i(i)- վերջածանցից (արական սեռ) առաջացած ցեղանվանակերտ վերջածանցներ են (հմմտ. Azzi, Alzi, Simesi, Subi, Tiluli և սեպագիր այլ տեղանուններ):

Pulu-adi երկրանվան -adi բաղադրիչի հիմքում հ.-ե. \*sadh- արմատ պարունակող և ածական դարձած \*ադի (< \*sadh-i-ā) նախածնն է, որը նշանակում է «աջի» և «հարավի, հարավային»: Ըստ այդմ՝ Puluadi երկրա-

57 ՀԲԲ, հատ. IV, էջ 512:

58 Նույն տեղում, էջ 513:

59 Стів Георгіев В. И., Исследования по сравнительно-историческому языкознанию (Родственные отношения индоевропейских языков), М., 1958, էջ 94, **Տահուկյան Գ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 67, 93:

60 Стів Арутюнян Н. В., նշվ. աշխ., էջ 77, 372: Լեռնանցքի անվանումից (**Տարոյ բերան**) ստեղծված երկրանվան օրինակ է Մեծ Հայքի **Տարոյ բերան** լեռնանցքի անվանումը, որից էլ **Տարուբերան > Տորուբերան** (տես **Երեմյան Ա.**, նշվ. աշխ., էջ 85):

61 Տե՛ս ՀԲԲ, հատ. IV, էջ 245-246:

նունը նշանակում է «հարավային անցուղի, հարավային դուռ», ինչը համապատասխանում է ինչպես Փուլուադի երկրի՝ վերոհիշյալ լեռնանցքներին կից լինելու փաստին, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի բնակիչների տեսանկյունից նրա հարավում (աշխարհի աջ կողմում) գտնվելու իրողությանը: Ինչ վերաբերում է բերված ցեղանունների հնդեվրոպական-հայկական ստուգաբանություններին, ապա պետք է նկատի ունենալ, որ թեպետև դրանք ավանդողները ասորեստանցիներ են եղել և դրանք ավանդել են ասորեստանյան սեպագրությամբ, բայց նրանք գործել են Ուրարտու-Հայաստանում և այդ անունները լսել են տեղացիներից:

Կային լեռնանցքների հսկողությունն իրականացնող մարդիկ: Կարծում ենք, որ դրանով է պայմանավորված ինչպես **կատիշ-ք** (հուն. Καδοῦσι-οι, պարս. **քադուշ**)<sup>62</sup> ցեղանվան, այնպես էլ Փուլուադիի թագավորի պակասավոր Kadiau- անվան գոյությունը: Մովսես Խորենացին Հայաստանի արևելքում Վաղարշակ թագավորի հաստատած նախարարությունները համարում էր Սիսակի և Կադմոսի սերունդները<sup>63</sup>: Սիսակյանները հայտնի էին Արաքսի ստորին հոսանքից հյուսիս ընկած շրջաններում, ուրեմն Կադմոսի սերունդները գետի ստորին հոսանքից հարավ բնակվածներն էին, բայց ոչ Արամանյակի որդի Կադմոսի սերունդները (սրանք բուն հայկական ծագում ունեին և բնակվում էին Արևմտյան Տիգրիսի ավազանում)<sup>64</sup>: Արաքսի ստորին հոսանքից հարավ բնակություն հաստատած Կադմյանների էթնիկական պատկանելիության տեսանկյունից ուշագրավ են թրակյան Κάδομος, Κάδομιλος և Καδομίλος անձնանունները<sup>65</sup>, որոնք **Կադմոս**-ի հետ միասին կարող են ծագած լինել թրակերենի միևնույն արմատից: Այստեղ չենք անդրադառնա հունական Κάδομος դիցանվան ծագման վիճելի հարցին, այդուհանդերձ հարկ ենք համարում նշել, որ Ա. Կարնուան, նկատի ունենալով Κάδομος-ի՝ Հեսիքիոսի բերած «նիզակ», «բլուր», «վահան» բացատրությունները, դրա հիմքում տեսնում էր հ.-ե. \*kadh- «պաշտպանել, պահպանել» արմատը<sup>66</sup>: Կադմուսիների ցեղանունը և Փուլուադիի արքայի անունը ևս կարող են հ.-ե. \*kadh- արմատից ծագած լինել, եթե նկատի առնվի նրանց՝ լեռնանցքների պաշտպանությունը ստանձնելու իրողությունը:

62 Տե՛ս **Երեմյան Ա.**, նշվ. աշխ., էջ 115:

63 Տե՛ս **Խորենացի, Բ.**, ը:

64 Տե՛ս **Խորենացի, Ա.** ժա, Ա, ժբ: Տե՛ս նաև **Պետրոսյան Ա.**, Արամանյակի որդիները և նրանց տիրույթները եռադասության տեսանկյունից, էջ 24-28:

65 Տե՛ս **Ջահուկյան Չ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 72:

66 Տե՛ս Carnoy A., Dictionnaire etymologique de la mythologie greco-romaine, Paris, 1957, էջ 88: **Չ. Ջահուկյանը**, զուգորդելով թրակյան, հունական, հայկական հիշյալ անունները և հունականի համար ենթադրվող փյունիկյան գծմ «արևելք» արմատը, գրում է. «Անհնար չէ Խորենացու հիշատակած Հայկի հաջորդների և նախարարական տների որոշ անունների մեջ տեսնել հայասական թագավորների անունների և դիցաբանական անունների արձագանքը **թրակյան հատուկ անունների հետ միասին**» (ՀԼՊԺ, էջ 341):

#### 4. Ադիաբեննե երկրանվան մասին

Եթե Հայկական լեռնաշխարհի բնակիչ մեր նախնիները իրենց բնաշխարհի հյուսիսային հարևան երկրին տվել էին մի անուն՝ **Վիբբ**, որի հնդեվրոպական նախածնը «ծախ» > «հյուսիս» է նշանակել, ապա, նույնպիսի մոտեցում ցուցաբերելով, հարավային հարևան երկրներից մեկին էլ պետք է որ տված լինեին մի անուն, որի գլխավոր բաղադրիչի հնդեվրոպական նախածնը «աջ» > «հարավ» նշանակեր: Եվ իսկապես, Հայկական լեռնաշխարհին հարավից հարող Միջագետքի հյուսիսարևելյան մասը հույներին հայտնի էր դարձել  $\Lambda\delta\iota\alpha\beta\eta\nu\acute{\eta}$  անունով (սրա վերջին բաղադրիչը՝  $-\eta\nu\eta$ , հենց այդպիսի բովանդակություն ունի և հունարենի քաջ հայտնի տեղանվանակերտ վերջածանց է, որ հետագա հավելում է): Հույն հայտնի աշխարհագետ Ստրաբոնը գրել է. «Ադիաբենը մեծավ մասամբ դաշտավայր է և իբր Բաբելոնի (իմա՝ Միջագետքի – Ս. Պ.) մաս է համարվում, թեև ունի իր սեփական իշխանը, ինչպես և կցվել է Հայաստանին: Մարերը, հայերը և երրորդ՝ բաբելացիք (իմա՝ սեմալեզու տարրը – Ս. Պ.), այս կողմերի ազգերից մեծագույնները, սկզբից հարաբերությունների մեջ էին իրար հետ, պատեհ առիթով հարձակվում էին իրար վրա, հետո բանակցում և նորից հաշտվում»<sup>67</sup>:

**Ադիաբ**-(ենն)/ $\Lambda\delta\iota\alpha\beta-$  ( $\eta\nu\eta$ ) երկրանվան հիմքային բաղադրիչներից առաջինը՝ **ադի**-ն, ծագում է հ.-ե. \*sadh-i(i)a նախածնից, որը հայերենում դարձել է նախ **\*ադի**, ապա՝ **աջ** (< հ.-ե. \*sadh- «աջ»)<sup>68</sup>: Երկրանվան երկրորդ բաղադրիչը հայերեն **\*աւ** (< հ.-ե. \*au-) արմատի հունական արտացոլումն է, որի նախնական իմաստը եղել է «գիշերել», բայց հայերենում այն ձեռք է բերել «օթևան» (օթևան < \*աւ-թ-ևան), «գիշերը մի տեղ անցկացնելը» (օթ < աւ-թ < \*auti), «ննջարան, սենյակ, բնակարան» (օթանոց, օթևան, օթոց) իմաստները<sup>69</sup>: Հ.-ե. \*auti ձևն է, որի հնագույն գրանցումն առկա է Autiāra (< \*աւթի-Արա՞) գավառանվան մեջ. Autiāra-ն, ըստ Աթեննյան Դարեհ I-ի Բեհիստունի ժայռի արձանագրության (§30, II, 57-63), նրա զորքերի դեմ հայ ապստամբների մղած 5-րդ ձակատամարտի վայրն էր<sup>70</sup>: Գավառանունը թերևս նշանակում է «Արայի օթևան, Արայի հանգրվան»: **Ադիաբեննե** < \***Ադի**-աւ երկրան-

67 Ստրաբոն, էջ 87-89 (Strabo, XVI, 1, 19):

68 ՀԱԲ, հատ. I, էջ 246:

69 Տե՛ս ՀԱԲ, հատ. I, էջ 76, հատ. IV, էջ 609-610: Մեր կարծիքով՝ հ.-ե. \*au- «գիշերել, օթևանել» արմատից է ծագել հայ. **աւան** բառը, որը ենթադրաբար համարվել է պահլավերենից (միջ. պարս.) կատարված փոխառություն (տե՛ս ՀԱԲ, հատ. I, էջ 353): \***Աւ**-ան բառի երկրորդ բաղադրիչը **-ան** վերջածանցն է, որն առկա է **բերան**, **դերձան**, **դուրան**, **կռան**, **մկան** բառերում, **Դերջան**, **Երևան**, **Սևան**, **Սիփան** և այլ տեղանուններում: **Աւան** բառի կրճատ տարբերակներն են **վան** և **վանք** բառերը, որոնցից երկրորդն իր «իլյուրանոց, իջևան, օթևան, բնակավայր» իմաստներով ավելի մոտ է ոչ թե պահլավերեն ենթադրյալ \*wahana մախածնին (տե՛ս ՀԱԲ, հատ. IV, էջ 302), այլ հ.-ե. \*au-ից ծագած իր արմատակիցներին:

70 Տե՛ս «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Գ. Մ. Նայբանյանի**, Եր., 1964, էջ 15:

վան մեջ \*աւ պարզ արմատը հավանաբար ունի «օթևան, հանգրվան» իմաստը, ինչպես **Աւարայր** տեղանվան մեջ, որի ականատեսն ենք նաև Վասպուրականի **Արտազ** գավառի՝ **Աւարայր** անունով գյուղի և դաշտի անվան դեպքում (դաշտ և գյուղ Վասպուրականի **Արտազ** գավառում)<sup>71</sup>:

**Աւարայր** < \*աւ-արայր տեղանունը հնդեվրոպական է. առաջին բաղադրիչը վերոհիշյալ \*au- արմատն է, իսկ երկրորդը «հերկող, վարող» (այսինքն՝ «հողագործ») է նշանակում՝ կազմված հ.-ե. \*arə- «վարել, հերկել» արմատից և \*-ter վերջածանցից: Նույն հնչյունախումբը \*-ter > -յր ձևով է հանդես գալիս նաև **եղբայր, հայր, մայր** բառերում: Հ.-ե. \*arə- արմատին գործող անձ ցույց տվող \*-ter վերջածանցի կցումով ունենք \*արայր «վարող (մարդ)» բառը, իսկ գործող իր ցույց տվող \*-tro վերջածանցի կցումով՝ **արար** > **արօր** «արոր» բառը<sup>72</sup>: Սրանցից առաջինն է **Այրարատ** < \*Արայրատ երկրանվան նախօրինակում (-ատ վերջածանցի համար հմնտ. **արմատ, բացատ, խորխորատ, խրամատ և Շաղատ, Որթուատ, Տամբատ**)<sup>73</sup>: Ի տարբերություն **Աւարայր** տեղանվան **աւ-** բաղադրիչի «օթևան, հանգրվան» իմաստի՝ նույն **աւ** արմատը որպես տեղանվանակերտ վերջածանց է հանդես գալիս **Կճաւ, Ձիրաւ, Որդնաւ/Վարդնաւ, Պարտաւ, Յուրտաւ** և այլ տեղանուններում:

**Ադիաբենե**-ի բերված ստուգաբանությունը համահունչ է **Վիքք**-ի վերոբերյալ ստուգաբանությանը՝ դրա հետ միասին լինելով «աջ-ձախ» և «հարավ-հյուսիս» հակադրամիասնական անդամներով զույգերի համադրման արդյունք: Մինևույն ժամանակ սա վեր է հանում երկհակադրամիասնական մտածելակերպի բուն ակունքը՝ աջ և ձախ ձեռքերի գործառական հակադրումը: **Ադիաբենե** (< \*ադի-աւ < հ.-ե. \*sadhija-au) և **Վիքք** (< \*իվ-իր < հ.-ե. \*seu-er) տեղանունները նախապես առանձնակի չեն եղել, ստեղծվել են հակադրամիասնական զույգ կազմած երկհակադրամիասնության մեջ: Մինչև այս կամ այն երկրի անվանում դառնալը դրանք պետք է որ Հայկական լեռնաշխարհից հարավ և հյուսիս ընկած տարածքների ընդհանրական անվանումներ լինեին, որովհետև հնդեվրոպացիների՝ դեպի արևելք կողմնորոշման դեպքում դրանք հայտնվում էին հնդեվրոպական նախահայրենիք Հայկական լեռնաշխարհի աջ և ձախ կողմերում:

71 Տե՛ս **Երեմյան Ա.**, մշվ. աշխ., էջ 40, **Հակոբյան Թ. Խ.**, **Մելիք-Քախչյան Ստ. Տ.**, **Քարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. I, Եր., 1986, էջ 359, 489: Այս տեղանվան **Ավարայր** կազմությունը (այր-ին «քարայր») իմաստի վերագրումով անհավանական է տեղանցի հարթավայրային և գավառի՝ ավանդական հողագործության օջախ լինելու պատճառով (հմնտ. **Արտազ** գավառամունը և **արտ** բառը, **Հացին** գյուղամունը և **հաց** բառը):

72 Տե՛ս ՀԱԲ, հատ. I, էջ 350:

73 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Հացագիգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, ՊԲՀ, Եր., 1981, N 3, էջ 197-199:

## 5. \*Արդան/Առան երկրանվան մասին

Եթե հայերի հնդեվրոպացի արևապաշտ նախնիներն աշխարհի կողմերը որոշելիս ուղղորդվում էին արևածագի վայրով, ապա պետք է ունենային նաև աշխարհի այդ սրբազան կողմին՝ արևելքին տրված, նրա այդ բնույթը բացահայտող մի անուն, ասենք՝ քրիստոնյա հայերի **աղոթարան**-ին համարժեք մի անուն<sup>74</sup>: Մեր կարծիքով՝ դա եղել է **\*Արդան**-ը՝ արմատակիցը և իմաստակիցը **արդար** բառի. հմնտ. **Արեգակն արդար**: Սրա **արդ** < հ.-ե. \*art- արմատը նախ գործածվել է նյութական նշանակությամբ, բայց, Հ. Աճառյանի դիտարկմամբ, «Ձևական կարգավորությունը կամ նյութական ուղղությունը բարոյական մտքով առնելով կազմված է **արդար** բառը», որը նշանակում է... «ուղիղ, ճշմարիտ, հավատարիմ (մարդ), ստույգ, շիտակ, իրավ (խոսք)»։ հմնտ. հուն. 'αρτις «կարգավորություն», 'αρετή «արժանիք, մարմնական և հոգեկան ընտիր հատկություններ», 'αρτι- «արդար, ճշմարիտ», հին հնդկ. 𑀅𑀲𑀸- «սուրբ հրաման, իրավունք, ճշմարտություն», 𑀅𑀲𑀸 van «սուրբ, արդար», հին պարս. arta-// ավեստ. aša, ašavan «սուրբ»<sup>75</sup>: **-Ար** վերջածանցի համար հմնտ. **դալար, ծրար, պալար, սնար**: **Արդար** բառի արմատակից և իմաստակից **\*Արդան** < **\*արդ-ան** երկրանվան երկրորդ բաղադրիչը ևս վերջածանց է. հմնտ. **բերան, գերան, խորան, հորան** և այլ բառերի համապատասխան վերջածանցները: Սա որպես տեղանվանակերտ վերջածանց է հանդես գալիս **Արտահան, Դերջան, Կուրիճան, Երևան, Նկան, Սևան** և այլ տեղանուններում ևս:

**\*Արդան** երկրանվան հայերեն ստուգաբանությունն արդեն իսկ ապացույցն է այն բանի, որ երկրանունը բուն իրանական ծագում չունի: Այդուհանդերձ, այն գործածում էին նաև իրանցիները, որոնք այդպես էին անվանում ամբողջ Արևելյան Այսրկովկասը: Դրա հայերեն համարժեքը **Աղվանք**-ն էր՝ վերագրված թե՛ բուն Աղվանքին (հուն. 'Αλβανία) և թե՛ Կուրի աջափնյա հայկական տարածքներին: Անահիտ Փերիխանյանը ճիշտ է ցույց տալիս **Արդան** (ըստ նրա՝ \*Ardān) նախաձևից ծագած իրանական լեզուների ձևերը՝ միջ. մար. \*Arrān, պարթ. Ardān, միջ. պարս. Alān, ինչպես նաև միջին մարերենից փոխառյալ հայ. **Առան/Եռան** ձևերը, որոնք առկա են Աղվանքի հայ իշխանական տոհմի **Առանշահիկ/Եռանշահիկ** տիտղոս-տոհմանվան մեջ<sup>76</sup>: Այդուհանդերձ, սրանց բոլորի համար նա բերում է \*Ran կամ \*Rān անհայտ բովանդակությամբ ենթադրյալ նախաձևը<sup>77</sup>: Բանն այն է, որ հին (ընդհանուր) իրա-

74 **Աղոթարան** նշանակում է «Հորիզոնի այն կողմը, որտեղից լույսը բացվում է, արեգակը ծագում է, արևելք» և «Արեգակի առավոտյան լույսը, որի ծագելու ժամանակ դիմում էին արեգակին աղոթքով ու պաշտամունքով, արշալույս, արևագալ» (ՀԲԲ, հատ. I, Եր., 1944, էջ 51):

75 ՀԱԲ, հատ. I, էջ 306-308:

76 Տե՛ս **Периханян А. Г.**, Материалы к этимологическому словарю древнеармянского языка, часть I, Ер., 1993, էջ 14-16:

77 Տե՛ս նույն տեղում:



նական –rd– հնչյունակապակցությունը, իսկապես, միջին մարերենում (Ատրպատականի մարերի լեզվում) վերածվում էր –rr–ի՝ հայերենի *n*–ին մոտ հնչյունի, բայց **Առան/Նռան** տարբերակները ինչ–որ ենթադրյալ ձևից՝ \*Ran և այլն, չեն առաջացել, այլ այդ տեսքով փոխառվել են միջին մարական բարբառներից: Հայերենում նախահավելված **ա/ե** հնչյունները **ր/ռ** հնչյուններից առաջ այստեղ չեն գործում:

Բուն իրանական տարածքում երկրանվան հայտնի ձևերից ելակետալին ձևը պահպանել են հին պարսկերենը և պարթևերենը՝ Ardān, որոնց բնորոշ է հին իրանական –rd–ի պահպանումը. հմնտ. պարթևերեն sard, sardār, arday՝ միջին պարս. sāl, sālār, ālāy ձևերի դիմաց<sup>78</sup> (հայ իրակա–նությունից հիշենք տխրահռչակ Վարազ–Վաղանի անունը < միջ. պարս. Varaz–Valān//պարթ. \*Varaz–Vardān): Ենթադրյալ \*Ran կամ \*r–ով սկսվող այլ ձևից չէր կարող ծագել նաև հայկական ասքերից եկած **Առան** անունը, որում ևս նախաձայն **ա** հնչյունը նախահավելված չէ: Անձնանունը միջին մարերենից փոխառյալ նույն **Առան** երկրանունն է՝ ժողովրդական ստուգաբանությամբ վերածված երկրի վիպական անվանադրի անվան: Մի երևույթ, որը բազմիցս հանդիպում է ժողովրդական բանահյուսության մեջ:

Բերված և քննարկված երկրանունների նախաձև **\*Արդան**–ի հնդեվրոպական–հայկական ստուգաբանությունը պայմանավորված է նաև նրանով, որ հայոց ազդեցությունն արևելքում հազարամյակներ շարունակ տարածվում էր Արաքսի ստորին հոսանքից և՛ հյուսիս, և՛ հարավ ձգված շրջանների վրա: Ուրարտական դարաշրջանի համար Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, իրանագետ Ռ. Ֆրայը նկատել է տալիս, որ Ուրարտուից արևելք՝ մինչև Կասպից ծով, բնակվում էին տարբեր ցեղեր, սակայն «Առավել կարևոր են մեզ համար Ուրարտու պետության մշակույթն ու քաղաքակրթությունը, որը վիթխարի ազդեցություն է թողել հարևան բոլոր շրջանների վրա: Այդ ազդեցության հետքերը գտնում ենք թե՛ աբեմենյան արվեստում, ճարտարապետության մեջ և թե՛ անգամ Աբեմենյանների տիտղոսավորման բանաձևերում և արքայական արձանագրություններում»<sup>79</sup>: Նա նաև ավելացնում է. «Աբեմենյան պատկերացումը «արքայից

78 Տե՛ս **Перихания А. Г.**, Арамейская надпись из Зангезура (Некоторые вопросы среднеиранской диалектологии), ՊԲՀ, Եր., 1965, N 4, էջ 123, 127: Պարթևերենում հին իրանական **Արդան** ձևի պահպանումը դրա բուն իրանական ծագման փաստարկ չէ, որովհետև **Արդան/Առան** երկրանվան՝ արևելքին առուգաբանությունն անհամատեղելի է այն կրած երկրի՝ Իրանի արևելքում կամ դրանից արևելք գտնվելու հնարավորության հետ: Իր արևելաայսրևոկկասյան տեղադրությամբ Արդան–Առանը արևելք է դառնում միայն Հայաստանի նկատմամբ, որտեղից էլ այն ստացել է իր անվանումը: Ոչ թե Առան երկիրը, այլ դրանից հարավ Իրանի հյուսիս–արևմուտքում գտնվող Պարսպատունիքի լեռնաշղթան է հետագայում Իրանի հյուսիսային եզրագոտին կազմել և համապատասխան անվանում ստացել՝ պարս. **Սիահ–քուհ**, թրք. **Ղարա–դաղ**, որոնք «սև լեռ» են նշանակում: Իսկ «սև»-ը հյուսիսը բնորոշող հասկացություններից է: Բնականաբար, իրանցիների նախնիները Պարսպատունիքից հյուսիս ընկած երկրին «արևելյան» բովանդակությամբ անվանում **Արդան**, չէին տա:

79 **Фрай Р.**, Наследие Ирана, М., 1972, с. 100. Ուրարտական մշակույթի՝ իրանականի վրա ունեցած բարերար ազդեցության մասին տե՛ս նաև էջ 101, 108, 113, 122–123:

արքայի» մասին, անկասկած, ունեցել են դեռևս մարերը, ինչպես ավելի վաղ՝ ուրարտացիները»<sup>80</sup>:

Հայոց ազդեցությունը մեր լեռնաշխարհից արևելք ընկած շրջանների վրա ավելի է մեծացել այն բանից հետո, երբ Արտաշես I-ը (մ.թ.ա. 189-160 թթ.) Իրանին հարող հատվածում հիմնել է Փայտակարան նահանգը: Հայերի համար **\*Արդան** սրբազան անունն ըստ այդմ տարածվել է նաև Փայտակարանի վրա և հանրածանոթ դարձել նաև հարևան իրանցիներին, որոնք, հայերի հետևությանը, այն կարող էին գործածել թե՛ նեղ և թե՛ լայն առումներով (բայց, ամենայն հավանականությամբ, միջին մարական *\*Arrān/Առան* ձևով): Տեղին ենք համարում հպանցիկ անդրադարձ կատարել **Առան** և **Արան** տեղանունների հաճախակի հանդիպող շփոթին: Այն առաջ է եկել արաբական մատենագրության մեջ՝ հայերեն **ռ** և **ր** հնչյունների համապատասխան հնչյունների՝ այլ լեզուներում տարբերակված չլինելու հետևանքով: Առանը Աղվանքն է (հայկական աղբյուրների), իսկ Արանը՝ Արարատյան դաշտը:

Արաբ մատենագիր Յակուտ ալ-Համավին Մեծ ու Փոքր Մասիսների մասին իր նախորդների մատյաններից քաղում է հետևյալը. «Պատմում են, թե Առանում, Ար-Ռասի (Արաքս գետի - Ս. Պ.) շուրջը հազար քաղաք գոյություն ունեք: Ալլահը նրանց ուղարկեց Մովսես կոչված մի մարգարե, որը տարբեր է Արանի որդի Մովսեսից: Սա հրավիրեց նրանց աստծո հավատքին, բայց նրանք չհավատացին նրան, ուրացան և դեմ գնացին նրա հրամաններին: Այն ժամանակ... մարգարեն անիծեց նրանց, և Ալլահը Մեծ ու Փոքր Մասիսները (բնագրում՝ Հարիթ և Հուայրիթ) փոխադրեց Թայիֆից դեպի Առան, և նրանց տակ թաղվեցին ար-Ռասի բնակիչները»<sup>81</sup>: Այս վկայության մեջ հիշատակված Առանը, ավելի ճիշտ՝ **\*Արան-ը**, արաբներին նմանահունչ անունով հայտնի Աղվանքը չէ, այլ, ինչպես պարզվում է այս և նույն հեղինակի մյուս հաղորդումներից, Արարատյան դաշտը (այսօր էլ Արարատյան դաշտի ժողովուրդը այն **Արան** է կոչում, իսկ իրեն՝ **արանցի**՝ ի տարբերություն իր հյուսիսային հարևանների՝ **սարեցիների**): Նույն Յակուտը գրում է. «**Ալ-Հարիթ և ալ-Հուայրիթ**: Արմինիայի մեջ երկու լեռներ են, որոնց վրա են գտնվում Հայաստանի թագավորների շիրիմները՝ իրենց գանձերով: Ասում են, թե Պլինիաս իմաստունը կախարդել է այդ լեռները՝ որպեսզի մարդիկ չկարողանան բարձրանալ վերև: Մադայինին ասում է, որ Հարիսը և Հուայրիթը, որոնք Դվինի մոտ են գտնվում, իրենց անունն ստացել են Հուայրիթ իբն Օկբայից և Հարիթ իբն Ամրուից, որոնք Սալման իբն Ռաբիայի հետ Հայաստան են եկել, և նրանք առաջիններն են, որ մուտք

80 Նույն տեղում, էջ 108 (նաև 149):

81 «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց **Հ. Թ. Նալբանդյան**, Եր., 1965, էջ 69:

գործեցին այդ լեռները, որոնք կոչվեցին նրանց անուններով: ...Իբն ալ-Ֆակիհը պատմում է, թե Արմենիայում, Արաքսի եզերքին հազար քաղաքներ կային, և Աստված նրանց ուղարկեց մի մարգարե Մովսես կոչված (բայց ոչ Ամրանի որդի Մովսեսը), որպեսզի նրանց աստծու հավատին հրավիրի, բայց նրանք մերժեցին ու քարկոծեցին և նրա հրամանն անսաստեցին. նա էլ անիծեց նրանց ու Աստված ...նրանց վրա շրջեց Հարիթը և Հուայրիթը, և ատում են, թե այդ բնակիչները թաղված են նրանց տակ»<sup>82</sup>:

\*Արդան//Առան անունն իրանցիներին փոխանցած Փայտակարանում էր գտնվում Մեծ Հայքի գլխավոր սրբավայրերից մեկը, որտեղ, մեր կարծիքով, առաջնայինը արևի՝ ծովածին նորածագ արևի պաշտամունքն էր: Այդ սրբավայրը հիշատակող Ագաթանգեղոսը պատմում է, որ հայոց Խոսրով թագավորը Սասանյան Արտաշիրին հաղթելուց հետո «Ապա հրաման տայր ընդ կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, **յեօթն բագինս մեհենիցն** ուխտաւոր լինել պատկերաց կոոց դիցն պաշտաման: **Սպիտակ ցլուք և սպիտակ նոխագօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորուովք, ոսկեղէն և արծաթեղէն գարդուք...** զիւր ազգին Արշակունեաց զհայրենէացն պաշտամանց տեղիսն մեծարէր»<sup>83</sup>: Ս. Երեմյանի կարծիքով՝ «**Եօթն բագինք մեհենից**» կոչված ուխտատեղին գտնվում էր Փայտակարան նահանգի Գաբառու բագինք գավառի «**Եօթնփորակեան բագինք**» կոչված վայրում, իսկ ուխտավորը Մեծ Հայքի Խոսրով I (217-238 թթ.) թագավորն էր<sup>84</sup>: Մեր քննարկման առարկան դարձած նյութի համար առավել կարևոր են Ագաթանգեղոսի վկայության հետևյալ կետերը. 1. Շեշտված է զոհաբերվող բոլոր կենդանիների սպիտակ գույնը, երբ անխախտ էր «սպիտակ» և «սուրբ, սրբազան» հասկացությունների սերտ կապը: 2. «Յոթ» պաշտամունքային բնույթ ունեցած թիվը այստեղ ևս կարելի է հասկանալ «բոլոր», «ամբողջ» իմաստներով՝ որպես եռահարկ և քառակողմ տիեզերքի (երկինք, երկիր, ընդերք և հարավ, հյուսիս, արևելք, արևմուտք) միասնական, ամբողջական լինելու առասպելաբանական պատկերացման հետևանք (3+4=7):

### Այսպիսով:

1. Հայկական լեռնաշխարհի հարևան երկրների և դրանց բնակիչներին՝ մեր քննության առարկան դարձած հին անունները վերջիններս չեն ստեղծել, այլ հայոց նախնիները:

82 Նույն տեղում, էջ 51: Յակուտի հաղորդումներից պարզվում է, որ Հայաստանում Առան, այս դեպքերում և՛ **Արան**, կոչվել են նաև Նախիջևանի և Խարբերդի դաշտերը (տես նույն տեղում, էջ 37, 85, 118): Սա հիմք է տալիս ենթադրելու, որ միջնադարում հայերը **արան** կոչել են մշակովի ընդարձակ դաշտերը, իսկ **արան** (**\*ար-ան**) բառը կազմված է **ար** < h-ե. \*ar-/ʰarə- «հերկել, վարել» արմատից և **-ան** վերջածանց-տեղանվանակերտից: Առաջինի մասին արդեն խոսվել է **Ավարայր** և **Այրարատ** (< **\*աւ-արայր** և **\*արայր-ատ**) տեղանունների առնչությամբ, իսկ երկրորդին քանիցս անդրադարձել ենք հոդվածի տարբեր հատվածներում:

83 **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, Եր., 1983, Ա, էջ 22: 22-ը պարբերության համարն է:

84 Տե՛ս **Երեմյան Ա.**, նշվ. աշխ., էջ 51:

2. Հայկական լեռնաշխարհի հյուսիսային հարևան երկրներին ու դրանց բնակիչներին տրված Գամիռա և **Իբերիա/Վիրք** անունները, առնչվելով «ձախ» > «հյուսիս» հասկացությանը, իսկ հարավային հարևան երկրներին տրված **ՏՍՍՍՐ** (իր ածանցյալներով), **Puluadi-Փուլուադի** և **Ադիաբենե** անունները, առնչվելով «աջ» > «հարավ» հասկացությանը, ցույց են տալիս, որ առաջիններին այդ անունները տրվել են հարավից՝ Հայկական լեռնաշխարհից, իսկ երկրորդներին՝ հյուսիսից՝ դարձյալ Հայկական լեռնաշխարհից:
3. Այդ երկրանունները, որոնց գոյությունը պայմանավորված է Հայկական լեռնաշխարհի նկատմամբ իրենց նշած երկրների իրական դիրքով, միևնույն ժամանակ ունեն հնդեվրոպական-հայկական ծագում: Փաստ, որը տրամաբանական հիմք է տալիս պնդելու, որ դրանք ստեղծած Հայկական լեռնաշխարհի բնակիչները հայախոս են եղել:
4. Արևելյան Այսրկովկասի համար իրանցիների գործածած **Առան** անվանումը ևս իր հիմքում հայկական է: Դրա նախաձևը եղել է հնագույն հայերենի **\*Արդան**-ը՝ **արդար** բառի արմատակիցն ու իմաստակիցը: Նախապես այդպես է կոչվել աշխարհի այն կողմը՝ արևելքը, որտեղից ծագում էր **Արեգակն արդար**, և դեպի որը կողմնորոշվում էին մեր արևապաշտ նախնիները: Հեթանոս հայերը, արևելքը **\*արդան** կոչելով, դրա տակ հասկանում էին մոտավորապես նույնը, ինչ քրիստոնյա հայերը նույն արևելքը **աղոթարան** անվանելիս:
5. Այսուհետև անհեռանկար են դառնում քննարկված և ստուգաբանված երկրանունները (իրենց ածանցյալներով) հայկական իրակա-նությունից և հայերենից անջատ դիտարկելու փորձերը:

**Սարգիս Գ. Պետրոսյան** – 2 մենագրության և ավելի քան 140 գիտական հոդվածի հեղինակ է: Զբաղվում է Հայաստանի և Արևելքի երկրների հնագույն ու հին պատմության, ինչպես նաև հոգևոր մշակույթի հարցերով:

Էլ. հասցե՝ Vah1996@mail.ru

## Summary

### THE ARMENIAN NAMES OF NEIGHBOURING COUNTRIES

In the light of the “North-South” antiunitary concepts

Sargis G. Petrosyan

*Doctor of Sciences in History*

**Key words** – opposition, Gamirra, Gamirq, Iberia, Shubria, Puluadi, Adiabene, Indo-European.

The Indo-European tribes oriented themselves by facing the east, since for people who worshipped the sun, the East – the place of sunrise, was the sacred side of the world. Then, according to the system of binary mythological oppositions, the north – the dark side of the world, became the “left” side, and the south – the light side of the world, the “right” side.

Assyrian cuneiform sources from 722 BC mention the country of Gamirra and the people of Gamirra, Gamirrai, Gimirri, i.e. the Cimmerians. This country is located to the north of the Armenian Highlands, on the territory of present-day Georgia. In the ethnotoponym Gamirra <\*gam-er, in our opinion, gam meant the North Star. In Armenian, “quu” means “nail” and “բււն” means “nail, pole”. It is known that in the mythological representations of different peoples, the Polar Star is a nail around which the firmament rotates. If this is the case, then gam-er should mean “northerner”. The ancient Armenians also called their northern neighbors “վիր-ք” – “Iberians”, and their northern country “վիրք” – “Iberia”. This ethnotoponym is based on the Indo-European \*seu-er <\*seu – “left”, “north”, and -er suffix (compare gam-er). It is known that the kingdom of darkness was originally represented in the north. In ancient Armenian legends, it is said that Gushar Haykid inherited Mtin Mountain in northern Armenia. The oronym “Մթին” means “dark, gloomy” in Armenian.

As in the mythological ideas of the ancient Armenians, the mountains of the north, the left side of the world, were compared with the dark mountains of the kingdom of darkness, so the mountains of the south, the right side of the world, were compared with the clear, light mountains of the kingdom of the blessed.

Mount Savalan, located south of the ancient Armenian region of Parspatunik, is located in the north of ancient Atropatena (Iranian Azerbaijan). The oronym Saualan (<\*Saual-an) is of Indo-European origin. In Indo-European \*sau-

el “light > sun”. To the north of this mountain is the Salavat mountain pass. In Greek – pelasgus Σαλαβη “passage”. In Urartian inscriptions, the country of Puluadi is also mentioned here. The first component of this name is related both to the Armenian “փնղ” – “narrow passage, corridor”, etc., and to the Greek πύλη “gate” and the Greek pelasgus φύλαξ “guard, sentry, gatekeeper”. The second component of the name comes from the Indo-European \*sadh – “right” > “south” (>Arm. սօ). The name of Puluadi country entirely means “Southern Passage”.

In the south of historical Armenia are the Sasun mountains, where the country of Šubria of Assyrian sources was located. This name is based on the satem reflex of the Indo-European \*k’ubh-ro. In Armenian “սուրբ” – “sacred, holy” (<\*սուրբ). From the same Indo-European word \*k’ubh- originates the Sumerian (borrowed) name of Northern Mesopotamia ŠUBUR (>Akkad. SUBIR, Šubari, Šubartu. etc.). Šubartu is later attested as a synonym of the name Aššur//Assyria. In the north of Mesopotamia, south of Armenia, was ancient Adiabene (Greek: Ἀδιαβήνη). The name of this country consists of the components \*Adi-au- (-ena/-ene toponymic suffix of the Greek language), where \*adi- means “southern” (compare Pulu-adi), and \*au- < in Indo-European \*ai- “to spend the night, overnight”. In Armenian սւ-լթ> օթ> օթւան “lodging, dwelling, room, abode”.

Резюме

**АРМЯНСКИЕ НАЗВАНИЯ СОСЕДНЫХ СТРАН**

В свете мифологически противоположных представлений «север - юг»

Саргис Г. Петросян  
*Доктор ист. наук*

**Ключевые слова** - протиединство, Гамирра, Гамирк, Иберия, Шубур, Шубриа, священный, Адиабене, индоевропейский.

Индоевропейские племена ориентировались на восток, так как для людей, поклоняющихся солнцу, восток – место восхода солнца – был сакральной стороной света. Тогда у них, согласно системе двоичных мифологических противопоставлений, север - темная сторона света, становился «левой» стороной, а юг - светлая сторона света, «правой» его стороной.

В ассирийских клинописных источниках начиная с 722 г. до н. э. упоминаются старана Gamirra и народ gamirra, gamirrai, gimirri, т.е. киммерийцы.

Эта страна локализуется севернее Армянского нагорья, на территории нынешней Грузии. В этно-топониме *Gamirra* <\*gam-er, по нашему мнению, gam- означало Полярную звезду. Ср. арм. գիւմ «гвоздь» и բլուխ «гвоздь», «полюс». Известно, что в мифологических представлениях разных народов Полярная звезда – это гвоздь вокруг которого вращается небесный свод. Если это так, то gam-er должно означать «северянин». Древние армяне своих северных соседей называли также Վիր-ք «иберийцы», а их северную страну - Վիրք «Иберия». В основе этого этнотопонима лежит и.-е. \*seu-er <\*seu- «левый», «северный», а суффикс -er (ср. gam-er). Известно, что царство мракав первоначально рассказывается, что Гушар Хайкид унаследовал гору Мтин (Մթին) на севере Армении. Ороним Мтин по армянский означает «темный, мрачный».

Как в мифологических представлениях древних армян горы севера-левой стороны света, сопоставлялись с темными горами царства мрака, так и горы юга-правой стороны света, сопоставлялись с ясными, светлыми горами царства блаженных. Гора Савалан, южнее древнеармянской области Парспатуник, находится на севере античной Атропатены (Иранского Азербайджана). Ороним Saçalan (<\*Saçal-an) индо-европейского происхождения. Ср. и.-е. \*sāc-el «светлый» > «солнце». Севернее этой горы находится Салаватский горный проход. Ср. греч. – пеласг. σαλαβη «проход». В урартских надписях здесь же упоминаются страна Puluadi. Первый компонент этого названия этимологически связан как с арм. փոքր – «узкий проход, коридор» и т. д., так и с греч. πύλη – «ворота, врата» и греч-пеласг. φύλαξ «страж, караумный, привратник». Второй компонент названия происходит от и.-е. \*sadh- – «правый» > «южный» (> арм. օջ). Название страны Puluadi целиком означает «южный проход».

На юге исторической Армении находятся Сасунские горы, а в них находилась страна Šubria (из ассирийских источников). В основе этого названия лежит сатемный рефлекс и.-е. \*kubh-го. Ср. арм. սուրբ «чистый, священный, святой» (<\*սուրբ). От того же и.-е. \*kubh- происходит шумерское (заимствованное) название Северной Месопотамии ŠUBUR (> аккад. SUBIR, Šubari, Šubartu и т. пр.). Šubartu позже засвидетельствовано как синоним названия Aššur//Assyria. На севере Месопотамии, южнее Армении находилась античная Адиабена (греч. Ἀδιαβήνη). Название этой страны состоит из компонентов \*Adi-aḫ-(-ена/-ене – топонимический суффикс греческого языка), где \*adi- означает «южный» (ср. Pulu-adi), а \*aḫ- < и.-е. \*au- «ночевать, ночлег». Ср. арм. օր- յար- յար- յար- յար «ночлег, жилище, комната, обитель».

## REFERENCES

1. “Arabakan aghbyurnerê Hayastani yev harevan yerkrneri masin”, kazmets’ **H. T. Nalbandyan**, Yer., 1965 (**In Armenian**).
2. “Dareh Vshtaspi Biset’ unyan ardzanagrut’yunê”, t’argmanut’yunê **G. M. Nalbandyani**, Yer., 1964 (**In Armenian**).
3. “Drevnegrechesko-russkij slovar’”, Sostavil **I. X. Dvoreckij**, M., 1958 (**In Russian**).
4. “Hay zhoghovrdi patmut’yan k’restomatia”, hat. I, Yer., 1981 (**In Armenian**).
5. “Hay zhoghovrdi patmut’yun”, hat. I, Yer., HSSH GA hrat., 1971 (**In Armenian**).
6. “HSSR atlas” Yer.-M., 1961 (**In Armenian**).
7. “Nor bargirk’ haykazean lezui”, hat. II, Yer., 1981 (**In Armenian**).
8. **Abd ar-Rashid al-Bakuvi**, Izdaniye teksta, perevod, predisloviye, primechanija I prilozhenija Z. M. Bunjatov, M., 1971 (**In Russian**).
9. **Acharyan H.**, Hayerên armatakan bararan, hat. I-IV, Yer., 1971-1979 (**In Armenian**).
10. **Acharyan H.**, Liakatar k’erakanut’yun hayots’ lezvi, hat. III, Yer., 1957 (**In Armenian**).
11. **Adonts’ N.**, Hayastani patmut’yun, Yer., 1972 (**In Armenian**).
12. **Agat’angeghay** patmut’iwn Hayots’, Yer., 1983 (**In Armenian**).
13. **Anania Shirakats’i**, Tiezeragitut’yun yev tomar, Yer., 1940 (**In Armenian**).
14. **Arutjunjan N. V.**, Biajnili (Urtutu), Jer., 1970 (**In Russian**).
15. Astralnyje mify, “Mifologija. Zolotoj fond, Enciklopedija”, M., 2003 (**In Russian**).
16. **Dandamajev M. A.**, Politicheskaja istorija Axemenidskoj dzerzhavi, M., 1985 (**In Russian**).
17. **D’jakonov I. M.**, Assiro-vavilonskije istochniki po istorii Urtutu, “Vestnik drevnej istorii”, M., 1951, N 2-4 (**In Russian**).
18. **D’jakonov I. M.**, Predystorija armjanskogo naroda, Jer., 1968 (**In Russian**).
19. **Donini A.**, U istokov xristianstva (Ot zarozhdenija do Justiniana), M., 1989 (**In Russian**).
20. **Dzhaukjan G.**, Vzaimootnoshenije indojevropejskix, xurritsko-urartskix I kavkazskix jazykov, Jer., 1967 (**In Russian**).
21. **Fasmer M.**, Etimologicheskij slovar’ russkogo jazyka, t. III, M., 1971 (**In Russian**).
22. **Fraj R.**, Nasledije Irana, M., 1972 (**In Russian**).
23. **Georgijev V. I.**, Issledovanija po sravnitel’no istoricheskomu jazykoznaniju, M., 1958 (**In Russian**).
24. **Hakobyan T. Kh., Melik’-Bakshyan St. T., Barseghyan H. Kh.**, Hayastani yev harakits’ shrjanneri teghanunneri bararan, hat. I, Yer., 1986 (**In Armenian**).
25. **Homeross**, Vodisakan (hunaren bnagrits’ t’argmanets’ S. Grk’asharyan), Yer., 1957 (**In Armenian**).
26. **Ivanov V. V., Gamkrelidze T. B.**, Indojevropejskij jazyk I indojevropejci, t. I-II, Tbilisi, 1984 (**In Russian**).
27. **Ivanov V. V.**, Ob odnom tipe arxaichnyx znakov iskustva I piktografii, “Rannije formy iskusstva”, M., 1972 (**In Russian**).
28. **Ivanov V. V., Toporov V. N.**, Issledovanija v oblasti slavjanskix drevnostej, M., 1974 (**In Russian**).
29. **Jahukyan G.**, Hayerenê yev hndevropakan hin lezunerê, Yer., 1970 (**In Armenian**).
30. **Jahukyan G.**, Hayots’ lezvi patmut’yun. nakhagrayin zhamanakashrjan, Yer., 1987 (**In Armenian**).
31. **Jevsjukov V. V.**, Mify o mirozdanii, “Mirozdaniye I chelovek”, M., 1990 (**In Russian**).
32. **Larichev V. Je.**, Koleso vremeni, Novosibirsk, 1986 (**In Russian**).
33. **Malkhasyants’ St.**, Hayeren bats’ atrakan bararan, hat. I-IV, Yer., 1944-1945 (**In Armenian**).



34. **Melikish'vili G.**, Urartskije klenoobraznije nadpisi, M., 1960 (**In Russian**).
35. **Movsisi Khorenats'woy patmut'yun Hayots'**, Yer., 1981 (**In Armenian**).
36. **Perixanjan A. G.**, Aramejskaja nadpis. iz Zangezura, "Patma-banasirakan handes", Jer., 1965, N 4 (**In Russian**).
37. **Perixanjan A. G.**, Materialy k etimologicheskomu slovarju drevnearmjanskogo jazyka, chast I, Jer., 1993 (**In Russian**).
38. **Petrosjan S.**, Drevnejshije nazvanija Chernogo morja, ozer Urmija I Van v svete mifologicheskix predstavlenijax drevnyx armjan, "Vestnik obsh'estvennyx nauk", Jer., 1986, N 4 (**In Russian**).
39. **Petrosjan S.**, Plemennoj sojuz Xajasa-Azzi v sisteme dvoichnyx protivopostavlenij, "Vestnik obsh'estvennyx nauk", Jer., 1987, N 3 (**In Russian**).
40. **Petrosyan S.**, Aramanyaki vordinerë yev nrants' tiruty'nerë yeradasut'yan tesankyunits', "SHHHK git. ashkh.", XIII, Yer., 2010 (**In Armenian**).
41. **Petrosyan S.**, Dadarshishi zorabanaki nahanji yert'ughin, "Patma-banasirakan handes", Yer., 1982, N 3 (**In Armenian**).
42. **Petrosyan S.**, Daserë yev yeradasut'yan drsevorunnerë hin Hayastanum, Yer., 2006 (**In Armenian**).
43. **Petrosyan S.**, Hats'azgineri mshakut'yan yev pashtamunk'i artats'olumë Sharayi avandazruyts'um, "Patma-banasirakan hands", Yer., 1981, N 3 (**In Armenian**).
44. **Petrosyan S., Petrosyan Ts., Petrosyan L.**, "Jreri zavaki" pashtamunk'i artats'olumnerë sepagrayin mi k'ani teghanunnerum, "HH GAA Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentroni gitakan ashkhatut'yunner", Gyumri, 1998, I (**In Armenian**).
45. **Petrosyan S.**, T'raka-kimerakan ët'nikakan tarrë Arak'si storin hosank'i shrjanum, "Patma-banasirakan hands", 1979, N 1 (**In Armenian**).
46. **Petrosyan S.**, Yerek' daserë yev yeryak bnakavayrerë hin Hayastanum, HH k'aghak'ashinut'yan nakhararut'yan hay chartarapetut'yan azgayin t'angarani "Taregirk' 1994", Yer., 1995 (**In Armenian**).
47. **Petrosyan S.**, Yerkhark-yerkguyn tiezerk'i masin araspelabanakan patkerats'umë Haykakan lernashkharhum, "Lraber hasarakakan gitut'yunneri", Yer., 1991, N 2 (**In Armenian**).
48. **Sarkisjan D.**, Strana Shubria v urartskix nadpisjax, "Drevnij Vostok", 2, Jer., 1976 (**In Russian**).
49. **Strabon**, K'aghets' yev t'argmanets' H. Acharyan, Yer., 1940 (**In Armenian**).
50. **Yeremyan S.**, Hayastanë ëst "Ashkharhats'oyts'"-i, Yer., 1963 (**In Armenian**).